ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N106

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով)

ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելու վերաբերյալ

1. Հանձնաժողովը տալիս է իր դրական եզրակացությունը ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի գլխավոր հատակագծում հետևյալ փոփոխությանը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետը.

	Հողամասերի առկա նպատակային և գործառնական նշանակությունը	**Փոփոխությունից հետո հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունը**
	0.0942 հա մակերեսով գյուղատնտեսական արոտավայրերի գործառնական նշանակության հողեր	էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների՝ էներգետիկայի գործառնական նշանակության

2. Հանձնաժողովը նշում է, որ կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես, ապահովելով ՀՀՇՆ 30-01-2014 <<Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում>> շինարարական նորմերի պահանջները:

3. Գորիս համայնքի ղեկավարին առաջարկվում է.

- <<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի 14^3-րդ հոդվածի 30-րդ մասով սահմանված կարգով նշված փոփոխություններն արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի առաջին տեղակալ		Ա. Բաղալյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ		Ա. Հախումյան

Երևան, ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե, 12.09.2017թ.